

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Յունիս ամսից սկսած «Հայրենիք» ամսագիրը տա-
ՀԱՅՐԵՆԻՔ լիս է մի յաւելած «Դի-
ւան Հ.Յ.Դաշնակցութեան»
անունով, որ պիտի լոյս
տեսնէ նաեւ առանձին հատորով: Այդ
յաւելածում հրատարակելու եւ կենտ-
րոնական եւ կենտրոնական կոմիտէների
դիւանների մէջ եղած նիւքերը: Խմբա-
գըրութիւնը հետեւեալ ձեւով է բնորո-
շում իր նոր ձեռնարկի նպատակը.

«Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան» ձեռ-
նարկի նպատակն է, առարկայական հը-
նարաւոր անկողմնակալութեամբ, հում
նիւք մատակարարել հայ պատմագրու-
թեան՝ համագում, որ Հ.Յ.Դաշնակցու-
թեան կատարած պատմական դերը երե-
ւան հանելու լուսադոյն միջոցը փաստե-
րու եւ քիւերու հրատարակութիւնն է:
Պատմաբան - ուսումնասիրողներուն կը
մնայ տրւած նիւքերու հիման վրա
պատկերացնել դարաշրջանի դէպքերն
ու ոգին, այսինքն՝ նշմարիտ պատմու-
թիւնը:

Ամսագրի առաջին երեք համարներում
լոյս են տեսել Շերամ Լազարեանի յու-
շերը «Կարնոյ Առաջին Դէպքի» մասին,
Ստեփան Ստեփանեանի (Բալազան) յու-
շերն «Կուկունեան Խմբի Արշաւանքի»
մասին եւ Կուկունեան խմբի ամբաստա-
նագրի մէկ մասը - երեքն էլ քանգար-
ժէք վաւերագիր հայ յեղափոխական
շարժման առաջին շրջանը պատկերացը-
նելու համար:

«Հայրենիք»-ի այս ձեռնարկը օգտա-
կար եւ վաղուց արդէն անհրաժեշտ
դարձած գործ է: Մաղքենք, որ լինի
տեսական:

Նոր լոյս տեսաւ 5րդ տար-
ւայ յունւար - յունիս՝ 5-6րդ
ԱՆԱՀԻՏ միացեալ քիւր: Ուրեմն, եր-
կամսեան ի վերջոյ յանգել է
վեցամսեայի: Ընդերցողնե-
րին ուղղւած ազդի մէջ խմբագիրը գան-
գատում է, քէ՛քաժամարդներու կէսէն
աւելին, նոյն իսկ այժմ, երբ 5-6 քիւր
լոյս կը տեսնէ, դեռ չեն վնարած իրենց
հինգերորդ տարւան բաժնեգինը, եւ
կան բաւական քով, որ նոյն իսկ չոր-
րորդ տարւան բաժնեգինը չեն վնարած
տակաւին: Այս պայմաններում, իհարկէ,
դժւար է հանդէսի կանոնաւոր հրա-
տարակումը:

«Անահիտ»-ի ներկայ տետրակը բաղ-
կացած է 120 էջից, որի ուղիղ կէսը գը-
րաւել է ինքը խմբագիրը, մնացած կէ-
սը գիշել է ուրիշ 19 անձերի: Խմբագիր
Ա. Զօպանեանի գրածներէց արժէքաւոր
է «Յովհաննէս Սազգեղանի» կենսագրա-
կանը: Հեղինակը գտել է հետաքրքրա-
կան նիւքեր պատկերացնելու համար
այդ ինքնատիպ եւ աչքառու անձնաւո-
րութեան դէմքը: Յօդւածը զարդարւած
է մէկէ աւելի նոյնպէս հետաքրքրական
նկարներով եւ նամակների վերադա-
դրութիւններով: Յատկապէս յիշենք
Պետրոս Աղամեանի գեղեցիկ լուսանկա-
րը՝ դերասանի ձեռագիր մակագրու-
թեամբ: Ա. Զօպանեանի միւս գրութիւն-
ները՝ «Քրոնիկ», «Տպաւորութիւննե-
րու յիշատակներ հորհրդ. Հայաստանէն»
(շար.) ջրալի եւ անհամ բաներ են:
Զօպանեանի օտար «Քուրիստի» աչքով
դիտւած Հայաստանը շատ հեռու է Հա-
յաստանի իրական պատկերից: Յօդւա-
ծում պատահող աչք ծակող փաստական

սխալներն էլ հաստատում են, որ Ա. Զօպանեանը սաւառնակի պատուհանից է դիտել Հայաստանը:

Միւս նկարների մէջ առանձնապէս աչքի նշկնող բան չկայ. գրական բաժինը կազմած է սովորական, ոչ շատ տաք, ոչ շատ պաղ ոտանաւորներից եւ արձակներից: Ուսումնասիրութիւնների բաժնում նոյնպէս նկատելի բան չկայ: Գրական մասից արձանագրենք Ֆիրդուսի «Երգիծական ընդդէմ Սուլթան Մահմադի»-ի քարգամութիւնը պարսկերէն բնագրից, որ կատարել է Մ. Յ. Թիրեաքեանը: Պ. Թիրեաքեանը, որ համով-հոտով ուսումնասիրութիւններ է անում պարսից հին մշակոյթի բնագաւառից, խոստանում է տալ նաեւ Ֆիրդուսի կեանքն ու գործը եւ քարգամները «Շահնամը»-ի որոշ էջերը:

Շատ հարուստ չէ Ա. Զօպանեանի «մըտածման եւ արեւստի» հանդէսի այս տետրակը, որ կոչւած է գլխաւորապէս խմբագիր – գրագէտի անձին ծառայելու:

«Սինն»-ի վերջին, 6րդ համարում հրատարակւած է մի ընդարձակ Սինն ձակ քղբակցութիւն էջմիածնից, որ աւելի շուտ պաշտօնական վաւերագրի տպաւորութիւն է քողում եւ որ էջմիածնի եւ լուսաւորչական եկեղեցու նակատագրով հետաքրքրւողի համար ծայր աստիճանի ուշագրաւ տեղեկութիւններ է պարունակում: Անսահման մռայլ գոյներով է ներկայացւած էջմիածնի եւ հորհրդ. Միութեան սահմաններում գտնուող քեմերի վիճակը: 17-18րդ դարերում, խանական իշխանութեան տակ անգամ այդպիսի վիճակ գոյութիւն չի ունեցել: Անցեալները մի ամբողջական քերք գըրում էր, քեմերից հայոց եկեղեցին այնքան լաւ պայմաններում չի գտնւել, որքան այժմ՝ խորհրդային իշխանութեան ներքոյ: Գերագոյն հորհրդի արձանագրութիւնների հիման վրա կազմւած էջմիածնական այս քղբակցու-

թիւնը հաստատում է, որ երբեք հայոց եկեղեցին այնքան վատ պայմաններում չի գտնւել, որքան այժմ՝ խորհրդային իշխանութեան ներքոյ: էջմիածնի ամբողջ ունեցւածքը գրաւած է, մշակութային ո՛չ մի հիմնարկութիւն չունի. հասոյթի աղբիւրից զուրկ է եւ ապրում է միայն արտասահմանից ստացւած ողորմութեամբ: Աւելի խեղճ է քեմերի դրութիւնը: Պետութեան մէջ եկեղեցին միայն հանդուրժում է:

էջմիածնի վիճակը պատկերացնելու համար քաղենք այդ ուշագրաւ քղբակցութիւնից մի քանի կտորներ: էջմիածնից գրում են. «Մի մեծ հոգս ծանրացած է վեհ. Հայրապետի եւ Գերագոյն հորհրդի անդամների վերա, որ դարաւոր տաճարի շէնքի պահպանութեան եւ եւ բարեգարդութեան խնդիրն է. տարաբախտաբար, արդէն քանի տարի է կաքում են մեր երկու արեւելեան խորանները եւ խոնավութիւնն հետզհետէ անցնում է պատերին. բացի ներքին բարեգարդութիւնից՝ կտուրն ամբողջապէս կարօտ է նորոգութեան: Տեղական եւ սովորական միջոցներով ոչ մի հնարաւորութիւն չունինք այդ գործը կատարելու, առանց արտասահմանի հայութեան յատուկ օգնութեան»:

էջմիածինը յետին աղբաւորութեան մէջ է:

«Որո՞նք են եկամտի աղբիւրները: Տանարը իր մումալանաւորութեամբ եւ պատահական փոքրիկ նւերներով հագել կարողանում է ծածկել իր ծախսերը՝ մումի, մաքրութեան, սպասաւորների եւ երգիչների համար. իսկ Միութեան քեմերից շատ քիչ, գրեթէ ոչինչ օգնութիւն է գալիս, որովհետեւ քեմական եկեղեցիներն ու համայնքները իրենք դժարութեամբ կառավարւելու վիճակի մէջ են. դեռ առաջնորդներից ոմանց նպաստ է ուղարկւում Մայր Աթոռից: Մեր դրամական եկամուտը ջրաղացների սղունավարձն էր, որ այս անցած տարին շատ պակասել է, մինչեւ իսկ ոչ

բաւարա միաբանութեան հացը հոգալու, եւ ապա վանքի բակում եղած փոքրիկ բանջարանոցը, որտեղից հոգացուած են սեղանատան պէտքերը: Վանքի եւ Աթոռի ապահովութեան գլխաւոր միջոցները մնում են մեր արտասահմանեան հայութեան կամաւոր նւերները, որ, իհարկէ, դարձեալ շատ համեստ են կարիքների համեմատութեամբ»:

Վանքը ունի ընդհանուր սեղանատուն, որտեղից կարողիկսը եւ միաբանները ստանում են իրենց ճաշը: «Միաբանութիւնը բացի ճաշից ստանում է ամսական դրամական փոքրիկ ռոնիկ, որ բաշխում է ըստ այսմ. խորիքի անդամները, ինչպէս եւ Տ. Մեքրոպ Բագրատ եւ Մատթէոս Արքեպիսկոպոսները, Վեհ. Հայրապետի հանութեամբ ստանում են 120 ր., պաշտօն ունեցող եպիսկոպոսները 90, անպաշտօնները 80, պաշտօն ունեցող վարդապետները 70, իսկ անպաշտօնները 60 ր.: Վերջինների չափով էլ ստանում են որպէս նպաստ Նիկողայոս վարդ. Հին Նախիջեւանի գործակալը եւ Հայկապատի վանահայր Զաքարիա վարդապետը: Ըստ հանգամանաց եւ հարկի նամապարհածախս եւ նպաստ է տրւել եւ քեմական առաջ-

նորդներից նրանց, որոնք տեղական եկամուտներով հնարաւորութիւն չեն ունեցել հոգալու իրենց անհրաժեշտ պարէնը, ամսական 100, 200 եւ 300 րուբլու սահմանների մէջ: Միաբաններին 1933-34 թ. տրւել է մէկական փութ, բացառաբար եւ 2 փութ ցորեն կամ ալիւր սննդեան եւ այլ կարիքների լըրացման համար, որ հնարաւոր չէր միայն ստացած ամսականով հոգալ: Բաշխւել է երբեմն - երբեմն եւ քէյ, շաֆար, սապոն, սպիտակեղէնի կտորներ եւ մի - մի ձմեռայն վերաբրկուացու, որ նւեր էր ուղարկւած Լոնդոնի համայնքի կողմից. միաբաններից մի երկուսը դեռ չեն ստացել: Հիւանդ միաբանները համար բժիշկ է հրաւիրւած, դեղեր հոգացւած եւ դուրսը բժշկւելու գնացողներին համեստ նպաստ նշանակւած: Մի անգամ էլ Վեհ. Հայրապետի օծման տարեդարձի առթիւ բաշխւած է իւրաքանչիւրին 5-10 դրամ աստիճանի եւ դիրքի համեմատ»:

Եթէ այս է էջմիածնի փայլուն վիճակը, որով այնպէս ոգեւորւած են արտասահմանի հայ ազգայիններից ոմանք, հապա ո՞չ - փայլունը ինչպէս է լինում:

